



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա. Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
Էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

28 նոյեմբերի 2024 թվական

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 15 ՆԻՍԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին համայնքի ավագանու 14 (տասնչորս) անդամներ:
Բացակայում էր համայնքի ավագանու անդամ Ավագ Սահակյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ
Ավուշյանը:**

Նիստին ներկա էին Բյուրեղավան համայնքի Ջրաբեր և Նուռնուս բնակավայրերի վարչական
ղեկավարներ Բորիկ Դավթյանը և Աղվան Հարությունյանը, ֆինանսատնտեսագիտական,
եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի
պետ Լիլիթ Ավուշյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության,
գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Աշոտ
Պողոսյանը, համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների գծով
իրականացվող աշխատանքների պատասխանատու Նորաթ Շուշանյանը, համայնքի
ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության իրավիրաժ անձ, նույն
խմբակցության գործավար Նարե Սարգսյանը և «Նեքսթ Ջեն Սպորտս» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Ալբերտ Աբրահամյանը:

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց,
որ ավագանու տասնհինգ անդամներից նիստին ներկա են 14-ը, նիստն իրավազոր է և
առաջարկեց սկսել նիստը:

Ավագանու անդամ Ավագ Սահակյանը նիստին ներկայացավ ժամը 10:08-ին:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 15 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 28-ի հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 15 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 29-ի N 03-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2025 թվականի տեսակները, դրույքաչափերն ու արտոնությունները և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2025 թվականի դրույքաչափերը, հաշվարկման մեթոդները և արտոնությունները սահմանելու մասին:

5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 83-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գինը հաստատելու մասին:

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 66 բնակարանը Արմինե Վորոնցովի Դավթյանին անհատույց օտարելու մասին: